5270-
5272

½ 2000

5272 - Ա. Հ.
1196-Ա.Հ.

ՏԵՏՐԱԿԱՍ ԱՂՕՍ

որ կոչի Քաղաքավարութիւն։

Ի Հայրապետութեանն Սէյ Աթոռոյն Էջմիածնի Տէր Դաւթի Սրբազն Կաթուղիկոսի Ամ Հայոց։

Եւ՝ Պատրիարգութեան Սէյ Աթոռոյն Երուսաղեմի Տէրն Թէոդորոսի Սուրբ Խաչիկոպոսին։

Տպագրեցեալ Աստուածահրամանաւ Սրբոյ Աղթանիսի Պատրաստաքահանայի Կոստանդնուպօլսի Սբազն Պատրիարգի Տէրն Յովհաննու Ոսկեբերանի կոչեցեալ վասն մաքանութեան բարեւնապետին։

Ի Թուականին. ՌՄԾԵ.

Ի Կոստանդինուպօլիս։

Ի Տպարանի Յովհաննիսեան Պոլսի։

Մատենադարան
63-86

ԳԻՐՔ

Յաղագս Քաղաքավարութեան։
Գրեալ Աստուածնոյ։

✻ Հարց։

Ի՞նչ է քաղաքավարութիւն։

✻ Պատ։

Քաղաքավարութիւն է բարի ուսանելութիւն մտաց և համեստ գործավարութիւն մարդոյ ըստ ախորժութեանցն հաստատակացս։

✻ Հարց։

Արքայութիւն կերպիւ պարտ է մտանել։

✳ Պոռ։

Յայտմ գործս քո պարտիս նկատել զբարեհամբաւութիւն անուանն քոյ։ նաև զօգուտն անձինդ և զհաճութիւն հասարակաց։

✳ Հարց։

Յառաւօտուն յորժամ ի քնոյս ելանեմ՝ զի՞նչ պիտոյ է առնել։

✳ Պոռ։

Յամ առաւօտու յորժամ որ ի քէն ելանես՝ շուտով արի կանգնէ՝ և խաչակնքելով ասա։ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ և ապա սկսիր ասել։ գոհանամ զքէն բարերար ամ։ զի զիս անարժանս հասուցեր յայսմ ժամու առաւօտուս։ և յետոյ սկսիր զողջոյն քեզ մարիամն։ և զհայրմերն։ և զհաւատով խոստովանիմն և զայլ սովորական աղօթս զոր ինչ գիտես ասա։ կամ ծնրադրակն երկրպագութիւն եթէ չես գնալոց յեկեղեցին։ վասն հարկաւոր և բանաւոր գործոյդ։ Իսկ թէ գնալոց ես յեկեղեցին՝ զգ

հանդերձդ հագանելով և լուալով
զերեսդ և՝ ի ճանապարհին գնալով
սատ զաղօթս քո մտադրութ։
Այս զգոյշ լեր. զի մի՛ յորժամ զալ թ
նուա՝ ի քնոյդ՝ զմիտքդ սատին անդին
ճապաղեալ տար և անշահ և հոգոյ փնտա
բան մտածեր. և մի՛ ծուլանար ելա
նել՝ ի յանկողնոյդ. և թէ ելանես՝
շուտով հագիր զհնդերձդ և մի՛ շրջեր
սատ և անդ մերկ կամ զբպուռնով կամ
գիշերային գտակովդ և կամ գօտէ ար
ձակ. զի մի՛ մրսիցիս և կամ օտարա
կան մարդ կամ բարեկամ սիրելի
կամ ընտանի հանդիպիցի յանկար
ծակի և ամաչիցես։

✻ Հարց։

Յորժամ որ գնամ յեկեղեցին.
զի՞նչ պարտէ առնել։

✻ Պատ։

Յորժամ յեկեղեցին որ գնաս՝ ի բաց
ձգէ՝ ի քէն զամ դատարկ մտածմ
մունքներն և զբաղմունքներն քո. և
զմիտքդ՝ ի քեզ ժողովէ. որ դու մի՛

այնակ գանուի խս առաջի այ։ ոչ սասց
տրն մեր յ՚աքս թէ, յորժամ կայցես
աղօթս, մուտ՚ի սենեակ քո և փակեա՛
զդուրս քո։ և հայրն քո զոր տեսանէ
՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնա
պէս։ զոր ինչ աղօթք որ կասես՝ կամ
երկրպագութիւն կու անես՝ մտադ
րութիւն արա։ և յորժամ յաղօթիցդ
կու խալեսիս՝ միտ դիր զոր ինչ ընչ
թեռնուն։ եթէ աբ աւետարանն ի՞նչ
կամ պատարագ՝ և կամ շարական՝ և
կամ այլ ինչ գիրք՝ և կամ քարոզ։
՚ի նստիլդ և՚ի կանգնիլդ պարկեշտու
թիւն շարժիր։
Այլ զգուշ լեր՝ զի մի՛ հայեսցես աստ
և անդ ՚ի յաղօթելն և կամ ՚ի յերը
կրպագութիւն անելդ։ մի՛ հրեր զոք
և մի՛ նեղեր զընկերդ։ և մի՛ բարձր
ասեր զաղօթս քո։ և մի՛ բարձր հա
ուաչեր ։ զի խափանեսցես զաղօթս
այլոց ։ զի մի՛ շփոթեսցին և կամ՚ի
քեզ հայեսցին կամ զարմանայցեն։
մի՛ շատ նրստիր՚ի յեկեղեցին և կամ

երկար խօսիր հետ այլոց. մի՛ խօսիր
առասպել բանս և մի՛ լսեր յայլոց. և
մի՛ լրբաբար ծիծաղիր. ՝ի նստիլ ժո
ղովրդեան՝ դու մի կանգնած մնար.
և՝ի կանգնելոյ ժամանակն մի՛ նստիր՝
եթէ ոչ իցես տկար կամ հիւանդ և
կամ խիստ ծեր։ մի՛ թքնուր աստ և
անդ. այսինքն մի՝ ի մէջ պատուհանի
կամ՝ ի ներքև խրսիրին և կամ յեռա
դրան և կամ՝ ի մէջ փապուշլուխին
և կամ ուր և իցէ. այլ միայն ՝ի մէջ
թաշկինակին. այսինքն, մահրամայիդ
մէջն կամացուկ մի թուք որ այլք չեն
լսեն։ և մի՛ հայիր ՝ի վերայ թքածիդ
կամ խնջածիդ. և յորժամ որ խնջես՝
մի՛ գոռացներ զքիթդ։ ՝Ի հազալն քո
և՝ի խուխալն՝ մի՛ օռնար և մի՛ խան
ջուն հաներ խոզի նման. և մի՛ աղաղա
կաւ զքո ձայնդ բարձրացներ. այլ
համեստութիւն արասցես։

✳ Հարց։

Որպէս պարտէ առնել մինչ գնամ
կամ ընթանալն իմ ՝ի ճանապարհ։

✻Պատ։

Յորժամ ընթանաս կամ գնաս 'ի ճա-
նապարհ, զգլուխդ միջակ ըմբռնէ. ո՛չ խիստ ցած և ո՛չ խիստ բարձր. և յառաջդ հայելով գնայ։ նմանապէս քայլելն քո միջակ թող լինի. ո՛չ խիստ շուտ և ո՛չ խիստ թոյլ. եթէ ի ցեղ ճա-
նապարհն ցեխոտ կամ ջամուռոտ, ընտրելով գնա զկոխելոց տեղերն և յառաջէդ քան զքեզ մեծ մարդ որ գոյ, կամ իշխան կամ կարգաւոր և կամ այլազգի՝ 'ի վայր իջիր։ ողջերդ 'ի գետինն զարկելով և կամ թնթելով մի՛ գնար։

Լաւ զգուշ լեր. զի 'ի քայլելդ մի՛ շար ժեր զգլուխդ հպարտաբար կամ խեն թաբար. և զմի զձեռքերդ կամ աչ քերդ. և մի՛ ուտեր զկերակուր կամ միրդ 'ի ճանապարհին և մի՛ ընդ քեզ խօսիր. և մի՛ զձեռսդ վերայնելով բան ինչ մտածեր և մի՛ ծիծաղիր. և մի՛ առնուր 'ի ձեռքդ փայտ կամ քար և հարկանէր ասա և անդ և մի՛ ձայն

հաներ խաղ կամ տաղ ասելով։ մի՛
գնար խաղալով կամ ծռմռելով։ կամ
՝ի վեր մատներդ կոխելով։ և մի՛
զձեռքերդ յետևդ կապելով։ կամ
՝ի վեր ոչնչացդ դնելով։ նաև երկու
ձեռքդ միատեղ մի՛ դներ՝ի ճեպերդ։
այլ զմի ձեռքդ դիր և զմիւսն՝ի դուրս
հան թէ և ցուրտ ևս իցէ։ զբերանդ
մի՛ բաց թողուր։ և զքայլ ոտիցդ կամ
զամբուշդ մի՛ խիստ բանար։ այլ ջոջ
փաւոր ուրացցես։

✳ Հարց։

Լ՝թէ ընկեր հանդիպի՝ի ճանապարհ
հին։ որպէս պարտ է առնել կամ
գնալ ընդ նմա։

✳ Պատ։

Որոշմ հանդիպիս ընկերի, տեսցես
թէ որքան զքեզ փոքր է՝ դու տուր
նմա ողջոյն։ իսկ եթէ քան զքեզ
մեծ է տարաք կամ պատուով և կամ
կարգաւ, համբերեա նմա՝ որ նա քաջ
ընդունիցէ քեզ կամ ողջոյն տացէ, և
դու առնուցուս խոնարհութիւն։

և 'ի գնալն քո հետ ընկերիդ՝ միշտ ջա-
նա որ 'ի վարի կողմէն քայլես։ և նա-
'ի վերին կողմէն թող որ քայլէ։ և
կամ 'ի յոյժ կողմդ։ Լսակ թէ եր-
կուք իցեն ընկերքն քո, Լանա զի յեր-
կուքեն ոչն որ առաւել մեծ է կամ
պատուելի՝ զայն մէջ ձեր առնելով՝
այնպէս գնացէք։
Լոյս զգոյշ լեր։ զի մի երթայցէք խիստ
բարձր խօսելով և կամ լրբաբար ծի-
ծաղելով։ և կամ զայլս ծաղր առնե-
լով։ և մի՛ ընկեր լինիր հետ չար ա-
բանց կամ կանանց և մի՛ ուն իցես 'ի
ձեռս քո կամ 'ի գօտիդ ծաղկի կամ
մահրամա, կամ այլ ինչ խաղալիք։
և մի՛ թը քաներ առաջն ընկերացդ կամ
խնջէր։ այլ դարձո զերեսն քո 'ի դա-
տարկ կողմն։ և մի՛ ցեխոտէր զհան-
դերձդ կամ զկօշիկներդ և կամ ըզ
փապուչդ։ և մի՛ երևեցուցանէր ըզ
խլմէք 'ի քթէդ 'ի վայր կախեալ։
զի կարի մեծ ամօթ են այսոքիկ։
Լսակ 'ի գնալն ընդ մեծաւորի կամ

վարպետն՝ կամ քան զքեզ մեծագու-
նի՝ միշտ յետևէն գնա. և մի՝ երթար
հաւասար կամ յառաջ քան զնա։

✳ Հարց։

Ի խօսակցիլ ևի կենցաղավարին ընդ
զանազան մարդկանց որպիսի կերպիւ
պարտիմ վարիլ։

✳ Պատ։

Շատ խոհեմութի պիտոյ է քեզ.
զի զքեզ յառաջագոյն չափեա և
կշռեա. զի թէ բարկասիրտ ես և ոչ
կարես տանիլ այլոց հանապազ կամ շա
խատ խօսիլ և կամ ծանր խօսիլ, դու
բնաւ շատ մի՝ աներ և մի՝ դպչիր
այլոց ծանր խօսիւք։

Ոչ եթէ կամենաս կամ չանաս ասել.
նոքա այլ քեզ կասեն. յորժամ պար
տիս համբերել և զանց առնել զոր ինչ
լսես. և թէ ոչ կարես համբերել մի՝
կենցաղավարիր հետ մարդկանց. զի
մի՝ երևեսցի պակասութիւն քո. զի
շատ խռովուն պատճառ չլինիս։

Ի տուն բարեկամին քո առանց կո-

էլոյ մի՛ երթար վա՛ ուրախութեա։
Բայց յորժամ խմանաս զհիւանդութի
կամ զմահն նորա, յայնժամ առանց
կոչելոյ գնա առ՝ի տեսանել և մխի
թարել զնա և շահել սիրով։
Եւ գիտելի է՝ զի ընդ որոց որ կու
կենցաղավարիս և կամ հանդիպիս,
խնայիր թէ՝ որպիսի մարդ է և կամ
զի՞նչ արհեստ կու գործէ և իւր
սիրտն զի՞նչ բան առաւել կու սիրէ
զայնպիսի բանից խօսիր և հարցիր։
Զի Յովհաննէս խմաստասէրն կու ասէ
թէ՝ յորժամ խօսիս ընդ իշխանաց մա
նաւանդ այլազգեաց, պարտիս խօսիլ
և հարցանել վա՛ իշխանութեանց և
մեծութեց և պատուոց և վա՛ հա
ւատարիմ ծառայից և վա՛ քաջու
թեց և զինուց և ձիոց և թրջունց
գեղեցիկ խօսողաց և վա՛ որսացող
թռչնոց և շանց։ Ընդ կանանց՝ պարտ
է խօսիլ վա՛ քաղաքավարութեց և մար
դավարութեց, և վա՛ վայելուչ զգես
տից և զարդարանաց իւրոց և տանց։

Ընդ տղայոց՝ պարտ է խօսիլ զխաղալն
իրաց և պտղոց ուտելեաց և զգեստուց։
Ընդ ծերոց և ընդ կրօնաւորացն՝
պարտ է խօսիլ և հարցանել զնա-
մեստութեաց, ողջախոհութեան և բա-
րեխառնութեաց և սրբութեան։
Ընդ գիտնոց՝ պարտ է խօսիլ կամ
հարցանել զբան իմաստութեան և գի-
տութեաց։ Ընդ գեղացոց՝ պարտ է
խօսիլ զսերմանելոյ զփորելոյ զհեր-
կելոյ զերկիրն զմշակելոյ և մնուցա-
նելոյ զծառս և զորթս։
Ընդ աղքատացն՝ զողորմութեան և
զյուսադրութեան և զհամբերութեաց։
Նոյնպէս և ընդ հիւանդացն՝ զհամ-
բերութեան և զդեղոց և զբժշկութեան և
զայլոց նմանեցացն։ և զգուշլեր զնի-
մի՝ անպատեհ և անվայելուչ բանս
խօսիցիս։ այլ ամ մարդկանց զիւ-
րեանց հաճելեացն խօսեա։
Ուրախ մարդկանց մի՝ զքեզ դովեր,
քանզի է՝ հպարտութիւն։ և մի՝ պար-
սաւեր զնի է՝ յիմարութիւն։

Երկու մարդ որ միտեղկու խօսին՝
մի՛ ականջ դներ։ այլ շուտով անցիր։
Երկու մարդ հետ միմեանց որ կու
վիճաբանին, մըտածեա թէ որ կողմն
ճշմարիտ է՝ անոր կողմնէն խօսեա։ և
մի՛ խափաներ զճշմարտութիւն երես
պաշտութեաբ։ Եւ եթէ դու իցես
որ վիճաբանիս, ինչաստ մի՛ քշեր։
Իսկ թէ ընկերդ հաւանի բանիցքոց,
մի՛ հպարտանար կամ շարժեր զգլուխդ
և կամ խրոխտաբ՝ ի վերայ նոր։ այլ
համեստութեաբ կացիր։
Ի՝ մէջ գիտուն մարդկանց որ գտան
ուիս, դատարկ բան մի՛ խօսիր։ նաև
թէ լաւագոյն որ խօսիս՝ սակաւ խօ
սիր և թոյլ տուր, զի միւսներն այլ
խօսին։ և յորժամ այլքն որ խօսին,
դու մի՛ խօսք բերիր ասելոյ և կըտ
ցեր և կիսատ թողուր անոնց պատ
մածն։ այլ համբերեա մինչև որ լման
պատմեն։ և թէ այլքն որ դատարկ և
ունայն խօսին, մի՛ ծաղր առներ զնոս։
և մի՛ ծիծաղիր՝ ի մէջ այն խօսիցս, ուր

Չի պատկանիր ծիծաղիլ։

Յ մէջ գոռ հիկ մարդկանց, մի՛ խօսիր խրթին և ծածուկ բան, որ չի հասկացուի։ և մի՛ գրաբառ խօսիր։ այլ այնպէս՝ որ կարասցեն հասկանալ զոր ինչ խօսիս։ և մի՛ երևեցուցաներ զքեզ մեծ։ կամ հարուստ և կամ գիտուն։ այլ խոնարհաբար վարիր ընդ նոսա։

Մէկ տեղ մի որ հանդիպիս և տեսանես երկու կամ երեք մարդ որ կուխօսին ընդ միմեանս, նց խօսից մէջն մի՛ մտանէր՝ և մի՛ հարցանէր թէ զոր մի՞ կուխօսին։ այլ լուռ կացիր մինչև որ զիւրեանց խօսքն աւարտեն։ Իսկ թէ որ հարցանէն քեզ վասն այն խօսուած բանիցն զոր ինչ գիտես՝ զայն ասա։ և թէ քո ասելն վնասակար է և կամ թէ ոչ գիտես, ասա թէ լաւ մի չեմ գիտեր։ և թէ՝ի քէն ծածուկ կուխօսին, սակաւ մի հեռացիր։

Յորժամ՝ի մէջ մարդկանց կամենաս խօսիլ, յառաջ մտածեա թէ զի՞նչ

խօսելոց ես։ մի՛ բամբասեր զմարդ։
չի լինի որ այն մարդկանց միջէն մէկ
բարեկամ մի գտնուի բամբասեալ
մարդոյն. և երթեալ պատմէ նմա։
կամ թէ այլք չեն հաճիր լսել զբամ-
բասանքս։ մի՛ պատմեր զդարշելի և
զզազիր բանս կամ պիղծ գործս։ և
մի՛ զցնորական երազս։ և մի՛ զբօթալի
և զտրտմալի բանս։ այլ ոչ թէ
զի՞նչ բան առաւել կու սիրեն։
այնպիսի բան պատմէ։ և՝ի խօսիլն
քո մի՛ շատ շաբթեր զձեռքերդ և մի՛
աչքերդ և մի՛ զգլուխդ և մի՛ բարձր
խօսիր։ և մի՛ պատմեր անհաւատալի
իրս և կամ սուտ բանս և մի՛ հարցա-
ներ անպատշաճ բանս։ և մի՛ գովեր
զմարդ առաւել քան զչափն։
Յորժամ ընդ մարդոյ որ խօսիս ծա-
ծուկ՝ զբերանդ դէպ՝ի յականջէն
մօտ տար։ չի լինի որ բերան առ բե-
բան խօսելն՝ի քո բերանէդ հոտ առ-
նու և գարշի՝ի քէն։
Յորժամ որ խօսիս ընդ մեծ մարդ

կանց կամ հետ վարպետին կամ ընդ
մեծամեծ ողջոյից կամ ընդ վարդա-
պետաց՝ երկու ձեռքդ 'ի վեր փորոյդ
բարև ըմբռնեալ 'ի վայր հոյելով խո-
նարհաբար պատասխանի տուր զոր
ինչ հարցանիցէ. և մի՛ ձիգ ձիգ հայիր
'ի յերեսն ընդ որոց խօսիս կամ պա-
տասխանես։ և մի՛ նստիր առաջի նց-
դու քեզէն մինչև որ ասեն քեզ թէ
նիստ։

Յորժամ որ գնաս 'ի ժողովս մարդ-
կանց ուր գտանիս աղքատս և հարուստս,
իմաստուն և գռեհիկ, փեղերդ 'ի վեր
ժողովէ՝ և յետոյ մտիր 'ի ներս և
տուր ամենեսեան ողջոյն համեստութեամբ
և կանգնէ սակաւ մի։ մի՛ 'ի վերոյ
ամենեսեան անցանիր և նստիր. այլ 'ի
վայր տեղի մի նիստ, մինչև որ տա-
նուտէրն զքեզ ուր տեղ որ արժան
կու տեսանէ և հրաւիրէ. կամ թէ
այն տեղի մարդիքն ուր տեղ որ ցու-
ցանեն և կոչեն այն տեղն նիստ։
Այլ թէ քան զամենեսեան յառաջ գնա՝ որ

մարդ չէ եկած և գիտես որ գալոց են,
վերի ասածիս պէս արա. զի թէ 'ի
վերն բազմիս, յետոյ քան զքեզ պատ-
ՀԱՒՈՐ մարդ մի կուգայ, և յայնժամ
'ի վարի կողմն կու-իջուցանեն զքեզ
և յետոյ ամօթով կու լինիս։
Երկրորդ՝ յորժամ որ նստիս, մի' դը-
ներ զմէկ ոտքդ 'ի վր ծնկանդ և
մի' պարզեր զձեռքերդ 'ի վր բարձին
և մի' երկարացուցաներ զոտքերդ ա-
ռաջի մարդկանց և մի' խիստ կրճթնիր
բարձին և մի' մեծ պաղտաշ լարելով
նստիր այլ ծռունկ ջոքիր յառաջ, և
յետոյ պարզիր չափով։ եթէ դու
պատուՀաւոր մարդ ես, այն տեղն լի
նողաց զՀանն և զխաթրն հարցուր.
և թէ չէս՝ նոքա քեզ կու հարցանեն
և բարի եկիր կասեն. և գոհութիւն
տուր ՆՈՅ, և շնորհակալ եղիր խոնար-
հութեամբ զքեզ հարցանողացն։
Դ. թէ խօսիլ սկսես՝ նախ երկար
բան մի' պատմեր։ երկրորդ մի' յօժա-
րիր զնոր լսած բան պատմելոր լաւ

մի չես գիտեր։ երրորդ եթէ այլքն
որ պատմեն զնոր ինչ կամ զինչ և ինչ
մի՝ ասեր թէ ես գիտեմ։ և մի՝ կարեր
զնորա պատմութիւն և մի՝ շարժեր
զգլուխդ գիտողն նման թէ և ես
կարեր զբանն։

Չորրորդ՝ յորժամ որ պատմես զբան
մի, մի՝ ցաթկեցուցաներ զքո թուքն
փշրանքներն ՝ի բերանէն ՝ի վեր այլոց
և մի՝ ՝ի վերայ թղթոյ մինչ կարդաս
զգիրք կամ զթուղթ։ մի՝ թողուր երբ
կարիլ ըղձանգացդ որ աղտ մընու ՝ի
մէջն և սևանայ։

Հինգերորդ՝ ՝ի մէջ մարդկանց որ
նստած ես, մէջ մարդոյ ականջն ՝ի
վար բան մի ասեր այլ տար ՝ի դուրս
առանձին և խօսեա։

Վեցերորդ՝ մինչ պատմես զբան ինչ՝
մի՝ մշտեր կամ հրեր զքովն եղեալ
ընկերներդ, և մի՝ բարձրացուցաներ
զձայնդ առաւել և մի՝ շարժիր ձեռօք
և գլխով և մի՝ ծիծաղելով։ մի՝ զնե-
զուդ փաթաթելով և մի՝ խխստ քաշ

քաշ խօսելով, զի ձանձրութի բերի
լսողաց։
Իսկ եթէ տղայ կամ մանուկ ես՝ բնաւ
չի վայելէր քեզ խօսիլ՝ ի մէջն մարդ-
կանց. այլ ականջ դնել ամցուն և նկա-
տել զոր ինչ խօսին կամ որպէս շարժին
և կենցաղավարին հետ միմեանց։
Երրորդ՝ եթէ՝ ի ձմեռնային ժամա-
նակի հանդիպի ձեր մէկտեղին, և
ձեր մէջն մանկալ կամ թաղարով կը-
րակ դնեն վ՚ տաքանալոյ, մի՛ խա-
զար հետ կրակին. և մի՛ մաշայով խառ-
ներ զկրակն. և մի՛ թքանէր կամ
ինչ՝ի՝ մէջ կրակին կամ թաղարին։
և մի՛ ձգեր գէշ հոտեր ունեցող իր-
քեր՝ի մէջն։ մի՛ թքանէր հեռուէն
դէպ՝ի դուրս կամ՝ի վ՚ պատի կամ
դէպ՝ի փապուչլուխն. և մի՛ ինչ՝էր
զքիթդ՝ի մէջ ձեռացդ և նետեր՝ի
դուրս կամ սատ և անդ. այլ՝ի մէջ
մահրամայիդ. կամ ել՝ի դուրս և անդ
տրա զոր ինչ կամիս և դարձիր՝ի տեղդ
Չորկրորդ՝ մի՛ սրբէր զքիթդ կամ

զնոսանիքդ ձեռաք կամ թեշնիքներովդ
և կամ փեշովդ, այլ մահրամայովք։
Երրորդ՝ եթէ 'ի դուրսն խնջես,
զնոսանոտ ձեռքդ 'ի վեր պատին մի' քսեր։
Լակ թէ ներսն 'ի մէջ մահրամայիդ
խնջես, զքիթդ մի' գոռացներ խիստ.
և մի' հաներ զձայնն փողոց նման.
նոյնպես և 'ի խուխանն և թքանեն մի'
խրնչեր խոզի նման ձայն հանելով։
Չորրորդ՝ եթէ որ թքանես կամ
խնջես 'ի մէջ մահրամայիդ, մի' քա-
նար և հայիր 'ի մէջն. և մի' այլոց ցոյց
տար. և մի' բռնեն 'ի կրակին վերայ
չորացուցանելոյ համար։
Հինգերորդ՝ եթէ ցեխոտ կամ չա-
մուռոտ չուխա կամ կապա որ ունիս,
'ի վեր կրակին մի' չորացներ և շիներ
զցեխն առաջի մարդկանց։ Թէպէտ
չամուռոտ փեշով նստիլն ևս անկարգ
է, սակայն թէ կարելի է՝ ել 'ի դուրս
յօտայէն, և այն տեղն փոխեա՛ զհան-
դերձդ. կամ թէ կրակ բերել տուր
և

և անդ չորացո՛ և շիտ զցեխն և եկ
նստիր ՝ի տեղդ։
Եւ զգոյշ լեր՝ զի մի՛ ծաղը առնիցես
զմարդ ոք, որ գտանի անդ ՝ի մէջ
վերոյ ասացեալ պակասութեանց. և մի՛
նկատեր կամ ջնջեր տեսանել կամ
լսել զպակասութիւն այլոց. և մի՛ ծի-
ծաղեր ՝ի վերոյ այլոց պակասուն.
այլ թէ կարելի է՝ ծածկաբար խրա-
տեա զայնպիսին որ չառնէ զանպատ-
շաճ իրս։ բայց մի՛ իշխեր մեծաւորի
պէս, այլ եղբայրաբար։
Յորժամ մէկ տեղ մի կու կանգնիս
առաջի մեծաւորի կամ՝ ի ճանապարհ
հին՝ մի՛ դներ զմէկ ոտքդ ՝ի վերայ
միւսին. և կամ փաթեր ոտքերդ
մէկ զմէկ. և մի՛ քարշեր զմէկ ոտքդ
՝ի վեր, և մի՛ կանգնիր մէկ ոտքի վրա։
Նոյնպես թէ և առաջի խանութի կանգ-
նիս՝ մի՛ աներ այնպէս։ և թէ նստիս
՝ի խանութ մի, և ոտքերդ ՝ի վայր
կախ որ թողուս՝ մի՛ շարժեր և խաղ
ցըներ.

ցըներ։ և մի՛ խենդմնդկեր ինքնիրեա
և մի՛ ծիծաղեր։ և մի՛ խաղ կամ տաղ
ասեր, այլ հանդարտ կացիր։
Յորժամ մեծաւոր կամ վարպետ և
կամ հայր կամ մայրդ զքեզ՝ ի տեղի մի
որ կու ուղարկէ՝ շուտով գնա։ մի՛
ուշանար՝ ի ճանապարհին կամ խաղ
ա։ հետ տղայոց։ և թէ այլքն որ
կու խաղան՝ մի՛ կանգնիր հայիր։
այլ անցիր գնա։ և երբ որ հասանիս
՝ի տեղդ՝ մի՛ օյալանմիշ լինիր։ այլ
շուտով զի՞նչ որ առնելոյ ես՝ առ։ և
կամ խօսելոյ՝ ասա։ և այն մարդն
զի՞նչ կասէ քեզ կամ կու պատա
խանէ՝՝ի միտքդ պահէ և դարձիր դէպ
՝ի զքեզ ուղարկողին։ շուտով։ որ չէ
մոռանաս ասածն։ ուրիշ բան մի՛
խառներ յերկու կողմէն ալ զինչ ըսե
ցիր զայն ասա։ եթէ նոքա որ մէկ
զմէկու աւելի պակաս քիւ քիւր կամ
անէծք ասէր են, զայն մի՛ ասէր որ
խռովութիւն և կռուիւ չէ լինիր։

Յաղագս 'ի սեղան նստելոյ և 'ի սուելոյ։

Գլուխ Երկրորդ։

✻ Հարց։

Յորժամ որ 'ի սեղան նստիմ 'ի յուտել, մբպէս պարտիմ վարիլ։

✻ Պատ։

Յորժամ 'ի սեղան նստիս 'ի յուտել, տես ոչ կայ պատուհելի մարդ՝ քահանայ և կամ իշխան և տարօք մեծ մարդ, նա թող օրհնէ, և ապա նախ օրհնօղն սկսէ ուտել կամ տանիլ ըզ ձեռքն 'ի սեղանի կերակուրն՝ և յետայ դու տար զձեռքդ. և մինչ սկսար ուտել, հինգ մատովդ մի՛ ըմբռնիր զպատառդ և մի՛ թաթախեր զամէն մատներդ կերակուրով. այլ երեք մատամբդ ըմբռնէ զպատառն կերակուրով։

Երկրորդ՝ մի՛ ամէն պատառիդ սրբէր
զմանեարդ 'ի սրբո

վար խնամ։ և մինչ կերակուր ի բե-
ռանդէ՝ մի՛ խօսիր հետ մարդոյ։
Հինգերորդ՝ մի՛ անկեր աչքերդ մէջ
սահանին. և մի՛ ի վեր ուտողաց թէ
որպէս ուտեն. մինչ կու ծամես զմէկ
պատառն կուլ չէ տրուած՝ ուրիշ պա-
տառ մի կրկին մի՛ դներ ի բերանդ.
մի՛ խառներ զձեռքդ ի մէջ կերա-
կուրին. և մի՛ առնուր ի սահանի մէ-
ջէն այլոց առաջևի բաժին կերակու-
ր բն. այլ միայն քո առաջևի եղած բաժի-
նէն կամ՝ ի սահանէն առ։ և մի՛ չանար
քան զամէն առաւել ուտել. այլ պա-
կաս ուտել։ մի՛ դներ երկու ձեռք
ի մէջ սեղանոյն. և մի՛ պարզեր երկու
թիկունքդ ի վերայ սեղանոյն.
և մի՛ խիստ ծռիր ի մէջ սեղանոյն.
և մի՛ նեղացներ զընկերներդ այդ-
պիսի անպատշաճ արարողութեամբ։
և թէ ծըռիս ի դնելն զպատառն ի
բերան քո, յետոյ կանգուն նստիր
վերատին։

Ա եցերորդ՝ թէ որ առաջուդ հայց չի
մնայ, մի՛ քարշեր այլոց առաջև հացն.
այլ թէ կարելի է որ բերեն. և թէ
ոչ՝ կամց այնպէս, մինչև որ այլք տե-
սանեն և դնեն առաջիդ։ թէ հայց
կայ առաջիդ՝ մի՛ փշրեր և մի՛ թաղ-
թախեր կերակուր դնելով՝ի վրա նը-
և թէ դնես և թաթախես՝ կէր զայն
հացն և մի՛ այնպէս թողուր՝ և մի՛
տար այլոց։

Ա՝ի թափեր ներքև սեղանոյն հայց
կամ այլ ինչ կերակուր։ նաև մի՛ ՝ի
վրա քո թափեր։

Լ՝ոթներորդ՝ յորժամ զանազան կե-
րակուր որ դնեն ՝ի մէջ սեղանոյն, և
քո չափած կերակուրն պատահմամբ
քո առաջև՝ որ դնեն, մի՛ քշեր զայն
առաջեն, և մի՛ քարշեր քո սիրածն
քո առաջեն, այլ թող այնպէս մնալ.
իսկ թէ քո սիրածն քո առաջեն դը-
նեն, մի՛ չանար ուտել զամենն, այլ
սակաւ կեր՝ և թող զբաժին այլոց
ըն

ընկերացդ։ և եթէ ոմանք ոչ կարեն
երկարիլ և առնուլ, դու տուր նոցա.
այլքն որ քեզ տան՝ առ։ կերպ կերպ
կերակուրներն մի՛ խառներ մէկ զմէկ
և ուտեր։ լինի թէ ուրիշն չի ուտեր
այնպէս։

Ութներորդ՝ թաթախել ձեռաք մի՛
ըմբռներ զդգալ կամ չաթալ կամ
զգինոյ գաւաթ և կամ զդանակ։ և
մի՛ աղ առնուր ՝ի յաղի ամանէն առ
՝ի ցանել ՝ի վերայ կերակրոյ . և մի՛
քերեր զգլուխդ կամ զմարմինդ։ և
մի՛ քարշեր զպուռնօթի թաթախ մաշ
տամբ։ և մի՛ սրբեր զձեռաքդ ՝ի վր
հացի կամ ՝ի վր հանդերձիդ և կամ
աստ և անդ , կամ ՝ի վերայ ծնկան
փէշկիրին։ այլ խնդրեա զկտաւ , որ
լաւ մի սրբես զձեռաքդ, և ապա արա
զոր լինչ առնելոց ես։

Ինն ներորդ՝ մինչ ուտես զկերակուր
կամ զասպուր դգալով, մի՛ թափեր ՝ի
վերայ քոյ և մի՛ ՝ի վերայ սեղանոյ ,

կամ

կամ 'ի վերայ աղին՝ կամ պիպեռին
չափաւոր առ զկերակուրն որ չի թա-
փի։ և զդգաին խիստ 'ի ծայրէն մի
ըմբռներ մի՛ խիստ 'ի վայրէն։ այլ
միջակ կերպիւ։ և յորժամ ոսկոր մի
առնուս՝ մի՛ կրծեր անասնոյ նման։
և մի՛ ծեծեր 'ի վե՛ սեղանոյ։ և մի՛
'ի վե՛ հացին առ 'ի հանելոյ զծուծն
և մի՛ աղտոտեր զձեռքերդ։ և մի՛ որ
բեր զկերակուրն ամանն կամ սա-
այլ թող մեայ սակաւ մի 'ի մէջն։ յե-
տին սպասաւորաց ուտելոյ։

Մի՛ ըմպեր զջուրն կերակրոյ առն-
լով զամանն 'ի բերանքդ։ մի՛ փչեր
շատ հաց 'ի մէջ ապուրին։ այլ սակաւ
եթէ կամիս։

Տանելորդ՝ զի զդինին առանց ջրոյ
մի՛ ըմպեր։ և մի՛ երկու ձեռաք առ-
նուր զդաւաթն։ և մի՛ քշարքթափե-
'ի խմելն և մի՛ յետ խմելոյդ հան-
և մի՛ ցանկար շատ խմելոյ կամ արբե-
նալոյ։ և մի՛ թողուր շատ ըմբռնել

գաւաթն'ի ձեռագ։ երբ դնես զգինին
'ի բերանդ, մի' խիստ շուտով ըմպեր
և մի' խիստ յամր այլ միջակ կերպիւ։
մի' թափեր զգինին'ի վերայ քո կամ
'ի վերայ սեղանոյ կամ հացի կամ 'ի
մէջ աղի և պիպեռի։ կամ 'ի վերայ
այլոց իրաց։ և մի' խիստ ընուր զգա-
ւաթն և մի' թողուր ընուլ խիստ։
երբ որ ըմպես՝ նախ սրբեա՛ զշրբ-
թունքդ։ մի' ծամեր զգինին և մի'
լուանար զբերանդ գինեաւ։ և մի'
անյագ կերպիւ ըմպելով թափեր 'ի
շրթանցդ զգինին։ և թէ մէկ անգամ
մին չես կարեր ըմպել, մինչև 'ի կէսն
ըմպէ, և սակաւ մի շունչ առ և կրկ-
կին խմէ։ և թէ չես կարեր, յետ
դարձուր։
Այս է թէ տանուտէրն մոլեգնի և ըմ-
պէ քեզ ըմպել՝ աղաչեա՛ թէ չեմ
կարեր ըմպել։ և եթէ կրկին ստիպէ՝
խոստացիր թէ յետոյ կու խմեմ կամ
զցաւ ունիլ պատճառէ։

Եւ մինչ ունիս 'ի բերանքդ զկենդ
բակուր՝ կուլ չէ տուած մի՛ խմէլ
զջուր և կամ զգինի։ և երբ խմես
զջուր կամ զգինի, մի՛ հայիր 'ի յե-
ռեաս մարդկանց։
Եթէ առնուս զգինի՝ տես թէ քան
զքեզ մեծի ձեռքն այլ կոյ՝ մի՛ խմեր
մինչև որ նա խմէ և յետոյ դու։
Եւ զգոյշ լեր՝ որքան կարես 'ի վը
սեղանոյ, չի լինի չի լինի որ խոխաս։
կամ զպալղամդ բերես 'ի բերանդ։
կամ թքանես ուր և իցէ և կամ խընչ
ջես զբիլթդ։ մի՛ խնջեր կամ թքնուր
'ի մէջ ծնկան փէշկիրին։ այլ շուտով
գնա՛ 'ի դուրս և կամ հեռացիր 'ի սե-
ղանոյ, և անդ որա զոր ինչ առնելոց
ես, և դարձիր 'ի տեղդ։
Մի՛ գերգոտաբ ձայնիր։ մանաւանդ
որ բոլոր կերած լինիս։ զի հոտ առ-
նող քն խիստ կու գարշին։
Եւ եթէ յանկարծակի հազալ կամ
փռընգաալ հանդիպի՝ զերեսդ դարձո՛
'ի

'ի յերեսեդ։ կամ զմահրամայդ դէպ
'ի բերանոյդ ըմբռնէ։ չի լինի որ ըզ
թուքդ 'ի յերեսս մարդոյ կամ 'ի մէջ
հսեղանոյ կամ կրակրոյ ցայթեցու-
ցանես, և կամ խլլեալդ թուուցանես։
և մի՛ շարժիր զսեղանն կոխելով ըզ
ձեռքդ։

Ասեսանեարորդ՝ յորժամ որ յագե-
նաս, մի՛ ելաներ 'ի սեղանոյ մինչև
որքան զքեզ մեծն ելանէ։
Այսինքն մեծ ես՝ մի՛ ելաներ յանկար
ծակի օրհնել զսեղանն։ այլ նկատեա՛
և տես՝ թէ որ ուտող կայ դեռ և ա-
համբերեա՛։ որ յագենան ամենեան։
Այս յետ կշտանալոյդ՝ մի՛ խաղար 'ի
վերայ սեղանոյ։ մի՛ կոտորեր զրսկը
և կամ զկուտ մրգաց կամ եէ միշեց,
և կամ մի՛ կորեր զկեղև ինչ։
Մի՛ խօթեր զդանակ 'ի բերան քո
և մի՛ խառներ դանակով զակռներդ,
և մի՛ մատամբդ խառներ։ այլ միայն
աղբիկաս։ այսինքն հիլալով։

Մի՛ անլուսաձեռք երդ խաթեր՝ ի ձեռ
պերդ կամ խառներ. և մի՛ դներ՝ լվը
հանդերձիդ. այլ՝ ի յեզերս սեղանոյն
դիր մինչև ելանես և լուսացուիս։
Եթէ այլքն կշտացան և չեն ուտեր,
դու ևս մի՛ ուտեր։
Մի՛ սրբերը զչաթալ դանակն՝ ի վը
ծնական փէշկիրի. կամ՝ ի վը հացի.
այլ թող այնպէս, և յետոյ հետ ձե
ռացդ լուանաս։
Սեղանի տիրոջ չի վայելեր ստիպել
և կամ զօր անել մարդկանց շատ խը
մելոյ. բայց վա՞ ուտելոյ աղաչեացէ։
Նաև թող հայի՛ ի մէջ սեղանոյ. եթէ
մարդոյ առաջևն հաց չիկայ. հաց դը
նել տայ կամ դնէ. եթէ պարապ ա
ման կայ մարդոյ առաջևն՝ թող վերը
ցընել տայ. և ուրիշ ամանի մի այլ պը
տապ բերէ, որ այն տեղն դնեն մաը
դիկ զոսկերս մնոց և կամ զիւրաքան
ձկանց։
Ի՛ մէջ սեղանոյ՝ չի պարտ տրտում

և տխուր մնալ. մանաւանդ տանու-
տէրն պարտի զուարթ լինիլ, զի մի
մինչև մարդիկքն'ի նա հայելով տրտ-
մեսցին։ բայց եթէ 'ի տուն մեռելոյ
իցէ՝ ոչ պարտի լինիլ ուրախութիւն։
Ա'չէ պարտ'ի մէջ սեղանոյ բարկա-
նալ կամ կռուիլ ընդ մարդոյ և կամ
հակառակիլ կամ ցուցանել զդէմս
բարկութեան, կամ հայհոյել և կամ
անէծք տալ մարդոյ և կամ բամբա-
սել զոք։
Այլև ոչ է պարտ երկար պատմու-
թիւն անել կամ ան շահ խօսիլ և ձե-
ռօք շախտ անել՝ և զուարճութիւն
անել և յայտնել զգինովութիւն իւր.
և կամ զայլոց գինովութիւն, և կամ
չեխել զոք։

✻ Հարց։

Յորժամ ելանեմ'ի սեղանոյն՝ զի՞նչ
պարտ է առնել։

✻ Պատ։

Յորժամ ելանես 'ի սեղանոյն՝ նախ

պարտիս գոհանալ զայ, և օրհնել զ
սեղանն հայր մերիւ. բայց մինն եղիցի
գլխաւոր օրհնելոյ զսեղանն ձայնիւ
և այլքն համաձայնին ընդ նմա նուազ
ձայնիւ, որ ինքն միայն լսէ և ոչ այլ
քն. և ապա լուացիր կարգաւ. զի
նախ մեծաւորն՝ և ապա այլքն։

Ա՛ի խիստ շատ փրփրեցուցանէր զ
սապօնն և մի՛ առնուր ՝ի բերանդ.
այլ ՝ի վե՛ր շրթանցդ քսէ սակաւ մի,
և յետոյ լուա՛ զբերանդ և զշրթունքդ
ջրով. մի՛ խնջեր և մի՛ ձգեր զպալ
ղամդ ՝ի վե՛ր ծածկոցի լեկէնին կամ
ղաբէսին. այլ ՝ի բաց առ զղաբէսն
և թուք ՝ի մէջն. լուա՛ և զջրթալ
դանակս քո և սրբեա։

Օ՛ղնի լուացուցելոյ՝ շուտով մի՛ նրն
ջեր. այլ նիստ սակաւ մի և խօսիր ընդ
ընկերաց, և կամ շուրջ եկ, և ապա
գնա աղօթել ջերմեռանդապէս։ և
երբ ննջել կամիս՝ մի՛ հաներ զհան
դերձդ առաջի մարդկանց. և մի՛ ցոյց
տար

պատ զքեզ մերկ առաջի նց։ և մի՛
ելիր գար այնպա սատ և անդ կամ
՝ի վայր և՝ի վեր։ զնամ հանդերձս քո
՝ի մի տեղ դիր, որ ՝ի յառաւօտուն
զամենն ՝ի մէկ տեղէն առնուս և
յագանիս։

Եւ՝ի պառկիլն քո՝ խաչակնքեա զե
ռեսդ նաև ՝ի վերայ բարձին։ մի՛
պառկիր ՝ի վերայ կռնակիդ և մի՛ ՝ի
վերայ բերանոյդ։ այլ ՝ի վերայ մէկ
երեսիդ ընկողմանիր։ մի՛ տարածեր
զձեռքերդ, և մի՛ բանար զոտքերդ
լայնապէս։ այլ համեստութիւն պատ
կիր։ և՝ի ննջելն մի՛ բանար զբերանդ,
և մի՛ հաներ զշապիկդ, զի չէ վայել
լուչ։ և մի՛ մերկ պառկիր։ և
մի՛ բաց թողուր զքեզ
մրսիլ։

Վասն պասաւորաց սեղանոյ կամ այլ իրաց։

Գլուխ Երրորդ։

✻ Հարց։

Պասաւորքն սեղանոյն որպէս պարտ ոչին ծառայել կամ շարժիլ։

✻ Պատ։

Պասաւորք սեղանոյն նախ պարտին սփռել զկտաւ ինչ ի նեղոյ սեղանոյ, և ապա դնել զսեղանն ի վերն։ Երկրորդ պարտ է կտրատել դանակով զհացն ի մէջ սէլէյի և տանիլ շարել ըստ բաւականին ի սեղանն, և յետոյ փռել զդեստուխանն կամ զծնկան փէշ կիրն շուրջ զհացերոքն։ և յետոյ երթալ ընուլ նորանց զաղ և զպիպեռ ի մէջ ամանին և բերել դնել։ Եւ եթէ ունին զսովորութիւն դանակով ուտել, զանոնք այլ բերել դնէ։ Եւ եթէ իցեն կնանչէղէնք զայնոսիկ ևս դնիցեն։ նաև թէ յուսաջադոյն ուտելոց են զապուրեղէնս, զդդանէրն ևս բերել շարեսցեն ի սեղանն

կարգաւ։ և ապա երթան՝ի տնտեսու-
նքն կրգադրեսցեն զկերակուրն մին
չև որ մարդիկքն նստիցեն՝ի սեղան։
և եթէ կերակուրին հայցին գլուխոյն
առելքեր՝ի սեղն։ եթէ կերակուրի
սահմանն խիստ տաք է՝ կամ թէ խիստ
մեծ է, երկու ձեռօք ըմբռնէ մէկ
հատն։ և եթէ փոքր է և ոչ է խիստ
տաք՝ երկու երկու բեր։ մի՛ խօթեր
զբուրթ մատնքո՝ի մէջ կերակրոյ։ և
մի՛ քսեր զսահմանն՝ի վերքոյ և մի՛՝ի
վերայլոց։ և մի՛ թափեր՝ի վերայ մարդ-
կանց նստողաց։ մի՛՝ի դնելն և մի՛՝ի
վերցնելն։ և մի՛ տանիր կամ բերիր
զերկու ման մէկ ձեռամբ։ և մի՛՝ի
վերայ երկու ձեռացդ երեք ման։ է-
թէ պարտաց և եթէ լիք։

Եղբարդ՝ երբ ուտեն նոքա՝ կանգնէ
սակաւ մի հեռագոյն՝ի նոցնէ, և պատ-
բաստ եղիր կոտրելոյ զոր ինչ ասիցեն։
կամ պատրաստեա զգինին բաշխելոյ։
նաև զջուր փոքր փարջուկ լուա և զգ-
գաւաթներն։ մի՛ տնկեր աչքերդ՝ի

բերանս ուտողաց, զի մի՛ կարծիցին
թէ համարեա զպատառս նց՝ մի՛
զոր դուք ելցի մի՛ դներ մէկ ոտքդ՝ ի
վերայ միւսոյն. և մի՛ փաթաթեր առ՝ ՝ի
մեանս. մի՛ կանգնիր՝ ի վերայ մէկ ոտքիդ՝
վերացնելով զմիւսն։

Մի՛ հոյիր աստ և անդ. և մի՛ ծիծաղ
զի՝ խիստ՝ երբ պատմեն ուտողք՝
զծիծաղելի բանս։

Մի՛ թողուր զսեղանն և գնար ա՛
ռանց պատճառի։

Մի՛ կախ թողուր զձեռքերդ առաջի
նոցա մի՛ դներ՝ ի ճեպսդ՝ այլ՝ ի վերայ
գօտոյդ բարև ըմբռնէ։

Մի՛ բանար զբերանդ որոշտալով կամ
երբնճկտալով. այլ դարձո զերեսաքո.
մի՛ բաց թողուր զբերանդ լսելով ըզ
զրոյցս նց՝. մի՛ խնջեր և մի՛ փշարքը
թուէ. և մի՛ թքաներ՝ և մի՛ ձայնիւ
խուխար, հնեել զպալղամս։ և մի՛ բերեր
զպոլղամն՝ ի բերանքո՝ և կուլ տար.
այլ գնա՝ ի դուրս և կամ հեռացիր՝ ի
նոցանէ. երբեմն նկատեա՝ ի մէջ սե

ղանոյն՝ և տես որոյ առաջևն հաց չի
դիր զհաց։ բայց կամացուկ մի
ելիր, և մի՛ նետեր 'ի հեռուէն։ և թէ
կերակուր չիկայ՝ գնա՛ քեր։ և յորժամ
բերես՝ տես թէ միանեն որ պարապ
են՝ կամ թէ ոչ ուտեն 'ի նցնէ՝ վեր
ցուր և թէ ոմանք որ ուտեն՝ թող
նայ։ և երբ քեզ ակնարկեն վերցնել՝
առ և տար, և դարձիր 'ի տեղդ։
Ա՛ի խօսիր հետ քեզ եղել եղբարցն,
որք են կանգնեալք 'ի սպասաւորու
թեան և մի՛ ծիծաղիր։
'Ի բերել և 'ի տանիլ քո զկերակուր՝
մի՛ ուտեր 'ի ճանապարհին և մի՛ աղ
տոտեր զձեռքերդ և մի՛ երկարացներ
զլեզուն գներդ։ զի մի՛ տեսօղքն զբզ
ՀԵՏՑԻՆ կամ գարշեսցին։
Յորժամ որ գինի ընուս՝ նախ կարշ
գաւորին և կամ պատուելի անձին
կամ մեծաւորին տուր, և ապա կարշ
գաւ պլոց ամենուն։ մի՛ խիստ ընուր
զգաւսանն և մի՛ խիստ սակաւ։ այլ
չափաւոր լեց՝ որ կարենաս տալ ա

ռանց թափելոյ. նաև առնօղն կարե
նայ 'ի մէջն ջուր լեցընելոյ։
Այլեւ եթէ մարդոյ ջուր որ տաս՝
փարչն մինչև 'ի շրթունքն մի՛ ընուր.
չլինի որ 'ի տալոյ ժամանակն թափես
զջուրն։

Այնչ բերես փարչն՝ մի՛ խօթեր և կամ
դներ զմատանքդ 'ի մէջ փարչին, այլ
ըմբռնէ 'ի կօթէն. և մինչ տաս մարդ
դոյ՝ ներքևէն ըմբռնէ և դարձո՛ զկօ
թին դէպ 'ի առնօղն և զմիւս ձեռքդ 'ի
կուրծդ դնելով տուր նմա։ և յորժամ
որ խմէ և տայ քեզ՝ սուր զնա շնորհակա
լութիւն և կամ համբուրելով զձեռն նոր։
Յորժամ որ ժողովես զսեղանն՝ կամ
վերացնես՝ մի՛ դներ զթաթախեալ
ամաններն միմեանց մէջն. այլ երկեր
կու հատ վերցուր. բայց յառաջ ժողո
վէ զհացի կոտորվանքն և դիր 'ի մէջ
սէլէյին կամ սէփեթին. և ապա վերը
ցուր զաղ սիպեռն ամաններն. մի՛
խառներ զկերակուրներն մէկ զմէկ.
այլ ինչպէս են՝ այնպէս տար զնա։

Ա՛ի սրբէր զսեղանն ձեռօք։ այլ կտոր
մի տաւուղ սրբեա՝ և լեց՝ի մէջ գա-
տարկ ամանի մի զաւելուքն կամ ըզ
փշրանքն սեղանոյն։ և ապա վերացո՛
զսեղանն և ժողովէ սփռել կտաւն և
ամենայն զսեղանն։ բայց դէպ՝ի վե՛ր մարդ
կանոյ մի՛ աւելեր՝ այլ հանեսուքն արա։
որ ժամ որ լուցցի՝ն տար զլեկէնն։
բայց մի՛ սղտոտել և կամ՝ի մէջն լո-
ւսաւորք ջուր լինիցի։ այլ թափէ զնա
յատաջագոյն և լուա՝ մինչ գիտես որ
մերձեցեալ ժամանակն եկանելոյ մարդ
կանց՝ի սեղանոյն։ և զկնի եկանելոյ նց՝
լեց զեպրիսին ջրով բայց ասկաւ եղիցի
տարբերին ջրոյն՝ և տար նախ առաջև
մեծաւորին, և ապա կարգաւ այլոցն։
և մինչ ընուս զջուրն՝ի ձեռքն՝ զձախ
ծունկդ չոգեցո՛ և զմիւս ծունկդ՝ի
վեր կալ։ մի՛ ըմբռներ զեպրիսին՝ի կոչ
թէն։ այլ՝ի վգէն ըմբռնել լեց չափա
ւոր։ մի՛ խիստ շատ և մի՛ խիստ ասկաւ
վազցներ զջուրն։ և մի՛ի դուրս ընուր՝

այլ նկատեա զմէջ տեղն լեկէնին։ և
մինչ լուսնոն՝ ձգեսցէ միւսն զմի-
կերն՝ի ձեռն նը։ և թէ ոչ դոյ ընկե-
դու յառաջագոյն առ՝ի յօմուզդ։
յայնժամ թողեալ զնպրիսին՝ ձգեա
ձեռին զփէշկիրն որ արքունի։
Վերջապէս մինչ գիտես որ գնա-
էն մարդիկ՝ի տունս իւրեանց՝ զ-
ամուսներ նոց շնտակացո և պատրաս-
տեա։ բայց յառաջ մի՝ թողուր մնալ՝ի
փապուչլուին, զի մի՝ ի յելանել և
ի մանելն կոխատիցին։

* Հարց։

Օ՛ր՝նչ այլ ինչ պարտէ մեզ այլ և
ուսանիլ ոչք պիտոյանան՝ի քաղա-
քավարութեան մերում։

* Պատ։

Պիտոյ են այլեւս զքաղաքավարութիւ-
ոմանս, որով պարտիմք վարիլ ընդ
ազգացն այնոցիկ՝ ոչք համաբնակեալք
եմք ընդ նոսա, և ի խիստ հարկաւորս։
Նախ՝ ի այլազգեացն ասեմ։ այսինքն,

ը ընդ տաճկացն միշտ պարտիմք
ոիլ խոնարհութիւն զի նա տաս
ետալն ասէ թէ, եամ անձն որ ընդ իշ
անութիւն է՝ ի հնազանդութեան կացցէ.
սոր այլազգեաց թագաւորութիւնն
ծ է և հզօր. մեք անոնց իշխանու
ան՝ ի ներքոյ եմք, միշտ պարտիմք
զանդութիւն կալ ընդ նոսա և միշտ
ոց տալ զնշան խոնարհութեան բաց
ի մեղաց։ զի որքան հետ նոցա եղ և
մուտ առնես կամ նստիս և կանգ
նիս, կամ թէ առ և տուր անես,
կամ ուտես և ըմպես, միշտ քաղց
ասբանութիւն խօսեա՛ և խոնարհութիւն։
և թէ առնելիք ունիս՝ աղերսանօք
խնդրեա՛։ և թէ պարտք ունիս՝ կամ
պատժոց արժան սուչ կամ ղատպ
հանթ ունիս, ազատիչ և պաղատիչ
պիտոյ է քեզ։ զի թէ նոքա բարկ
նան՝ և դու որ քաղցր խօսիս կամ
պատասխանես՝ անոնց բարկութիւն կու
մարես. որպէս ասէ իմաստուն թէ,

կակուղ պատասխանին՝ շինչուցա-
զբարկութիւն և փշրէ. զբարկն՝ յ-
խոնարհութիւն տուն և առնու։
Եւ զգոյշ լեր՝ չի լինի որ հակառակ
կամ դէմ խօսիս՝ և կամ ծաղր ա-
նես՝ կամ յաւելի պակաս խօսք ա-
կամ թէ հայհոյես, յետոյ՝ ի մէջ
փոխուիս թէ կու անկանիս նան-
վիճաբանիր խիստ վնաս հաւատոյ՝ ։
Է յոյժ որոգայթաւոր։
Եւ երկրորդ՝ հեռու յունաց և հռոմոց է
պուլղարաց և է առնաւուտից՝ որք
են քրիստոնեայք, իբրև զերդայր վա-
րիս հեռանց. մի՝ արհամարհելով կամ
տրնազելով՝ կամ չհաւատելով կամ
հակառակ շարժելով. թէ աղքատի-
ցեն և թէ հարուստ. և չի լինի որ
արատ դնես հաւատոցն նց. քանզի
է հաւատոյ իսկապէս երբ եղբարքն են։
Եւ երրորդ՝ է հրէիցն և ապարտ է վա-
րիլ բնական քաղաքավարութիւն. մի՝
հակառակելով և մի՝ արհամարհելով
կամ

տնաղելով և կամ հայհոյելով
նս նոցա կամ իւրեանց ։ մի՛
տաղեր 'ի վե՛ր նց կամ հարկաներ
ամ նախատեր ։ զի եթ առաքեալն
ղոս ասէ թէ, հրէից անհաւատու
մեզ հեթանոսացս փրկու թիւն
։ և Աւուանելիոս մեկնիչն ասէ
չին ասէ թէ, հրէայքն վկայք են
մխական օրինաց և մարգարէից
խօսեցաւ նց ասէ ։ և քրիստո
սական օրէնքն 'ի յոնաց և 'ի մար
գարէիցն նց հաստատեցաւ ։ զի եթէ
ոքա 'ի քո հաւատային՝ մեք այժմ
կարէաք ճանաչել մովսիական օրի
նաց ծառայողքն՝ թէ ոչք էին կամ
արդեւք օրէն ըմբռնեալ իցեն զնոյն օրէն
սն ։ կամ թէ ասէ իսկապէս տուեալ
իցեր նց օրէնս մարգարէիւք ։
Եւ զի յառաջագոյն բազում անգամ
բարկացուցին զասէ խրատասրտութեն
իւրեանց ։ վասն այնորիկ արդեալ զնա
ասէ 'ի յանհաւատութեան ։ նաև օրի

նակ առնուլ պարտնայեաց
զի թէ նոքա որ յառաջ քան
ուծ ապաշաք էին՝ ուծ ոչ լ
մեք ի վայրս կոտապարուլ
ի յաւծ պաշտուլթեան պատուական
ցեալ է զոք, շնորհակալ լինել ապա
տի՛ք յոյ առանց հպարտուլ։
գրէ ասն Պօղոս թէ, դու որ ծ
թենիդ վայրենի էիր պատուական
ցար՝ մի՛ հպարտանար, այլ երկ
զի թէ ուծ զբունն ոչ խնայեաց, գ
ց դու կոճոպիցիս։ զի թէ ըն
նոսա հակառակիլ պիտոյ լիներ, ա
նաւանդ քրիստոնեայ թ ազգաս
հակառակելոցք էին։ որ. յ՝ի ներ
խշխանուլթեց անթիւ հրեայք գ
ասկայն խնամելով պահեն զնա։
Ուրեմն մեզ ևս ոչ է պարտ հակա
ռակիլ։ այլ վարիլ ըստ բնական
քաղաքավարուլթե
ընդ նոսա։

170-00
3136 1869